44.	Օրբելի 10 - 36	Պոմպի վերանորոգում, փոխվել է 1 ավտոմատ անջատիչ, 1 թողարկիչ,1 լիսեռ
45.	Ք. Էջմիածին, Չարենցի 12	Պոմպի աշխատանքի կարգավորում
46.	Օրբելի 8	Պոմպի աշխատանքի կարգավորում
47.	մ. Արմավիր, գ.Արգել	Պոմպի վերանորոգում, պոմպի վերանորոգում, կցորդիչի փոխում, 2հ առանցքակալ
48.	Քանաքեռ 14 փ. 40 - 49	Պոմպի աշխատանքի կարգավորում
49.	Հակոբյանի 2/108 - 10	Պոմպի աշխատանքի կարգավորում
50.	Մարշալ Բաղրամյան 1 փակ. 14 - 24	Պոմպի աշխատանքի կարգավորում
51.	գ. Պռոշյան, Երկաթգծի փ 1/4	Էլ. համակարգի վերանորոգում, պոմպի և Էլ. համակարգի կարգավորում 1 ավտոմատ անջատիչի փոխարինում
52.	Բաղրամյան, 1 նրբ.մ 142 146բ	Պոմպի վերանորոգում, 1հ մեմբրան 500լ, 1հ ավտոմատ անջատիչ
53.	Կուրդիկյանի 21/2 - 43	Պոմպի աշխատանքի կարգավորում
54.	Վ. Համբարձումյանի 47 - 3	Պոմպի աշխատանքի կարգավորում
55.	Վ. Վաղարշյանի 1 - 60	Պոմպի աշխատանքի կարգավորում
56.	Սունդուկյան 15/4	Պոմպի աշխատանքի կարգավորում
57.	Հ. Էմինի 82 - 26	Էլ. համակարգի վերանորոգում, 2հ թողարկիչ, 2հ բարձր ճնշման ռելե
58.	Մամիկոնյանց 49/1 - 41	Պոմպի աշխատանքի կարգավորում
59.	Դ. Դեմիրճյանի 29 - 33	Պոմպի աշխատանքի կարգավորում
60.	Վաղարշյան 3շ 64	Պոմպի աշխատանքի կարգավորում
61.	Ք. Էջմիածին, Շահումյան 69շ, 10	Պոմպի վերանորոգում
62.	Հր. Քոչարի 13	Պոմպի վերանորոգում, պոմպի ապամոնտաժում և մոնտաժում
63.	մ. Կոտայք, ք. Բյուրեղավան	Պոմպի վերանորոգում, պոմպի զննում և 4կվտ շարժիչի փոխում
64.	ք. Էջմիածին, Մաշտոցի 110	Պոմպի վերանորոգում, պոմպի ապամոնտաժում և մոնտաժում 1 ժամային ռելեի տեղադրում
65.	Թբիլիսյան խճ. 2 - 109	Պոմպի վերանորոգում, 1հ ցածր ճնշման ռելե, 1հ լիսեռ
66.	Բաբաջանյան փողոց	Էլ. համակարգի վերանորոգում, հոսքաչափի էլ. համակարգի կարգավորում
67.	Կորեայի ձոր	Պոմպի վերանորոգում, հոսքաչափի էլ. համակարգի կարգավորում
68.	Գեղանիստ	Էլ. համակարգի վերանորոգում, հոսքաչափի էլ. սարքերի կարգավորում
69.	Նոր Գեղի /Բանավան/	Պոմպի վերանորոգում, պոմպի աշխատանքի զննում, կարգավորում
70.	Փափազյան 11/1	Պոմպի վերանորոգում, պոմպի աշխատանքի զննում, էլ. սարքերի կարգավորում
71.	ք. Էջմիածին չարենցի 1	Պոմպի աշխատանքի կարգավորում

72.	Մարգարյանի 2 նրբ. 8 - 32	Պումպի վերանորոգում, փոխվել է 2 հետադարձ փական, 1h ավտոմատ անջատիչ, 1h լիսեռ
73.	Արոնցի 17/3 - 36	Պումպի աշխատանքի կարգավորում
74.	Մամիկոնյանց 49/1 - 56	Պումպի աշխատանքի կարգավորում
75.	Էջմիածին մաշտոց փ 110-11	Պումպի աշխատանքի կարգավորում
76.	ք. Էջմիածին մաշտոցի 110	Պումպի աշխատանքի կարգավորում
77.	Էստոնական 12/1 - 101	Պումպի աշխատանքի կարգավորում
78.	ք. Էջմիածին վաղարշարատ թաղ.	Պումպի վերանորոգում, փոխվել է 1 առանցքակալ, 1 վտուլկի, պոմպի ապամոնտաժում և մոնտաժում
79.	ք. Էջմիածին չարենցի 1	Պումպի աշխատանքի կարգավորում
80.	Ն. Նարյան 3	Պումպի աշխատանքի կարգավորում
81.	Ըաֆֆու 45 - 46	Պումպի վերանորոգում, 1h հետադարձ փական, 1h լիսեռ
82.	Վ. Համբարձումյանի 47 - 48	Էլ. համակարգի վերանորոգում, պոմպի և էլ սարքերի կարգավորում
83.	Էջմիածին, Մաշտոց 110-11	Պումպի վերանորոգում, պոմպի ապամոնտաժում
84.	Սեբաստիա 26/1 - 32	Պումպի աշխատանքի կարգավորում
85.	Արգավանդ "Արգնի" ջրատարի հոսքաչափ	Էլ. համակարգի վերանորոգում, էլ սարքերի զննում, կարգավորում
86.	Համբարձումյան 472 բն 75	Պումպի վերանորոգում, , էլ սարքերի զննում, կարգավորում
87.	ք. Էջմիածին վաղարշապատ թաղ.	Պումպի վերանորոգում, պոմպի ապամոնտաժում, մոնտաժում
88.	ք. Էջմիածին շահումյան 46	Պումպի աշխատանքի կարգավորում
89.	Մ. Սարյանի 24 - 41	Պումպի աշխատանքի կարգավորում
90.	Էստոնական 12/1 - 129	Պումպի վերանորոգում, փոխվել է 1 բարձր ճնշման ռելե
91.	Վ. Համբարձումյանի 8/1 - 46	Պումպի աշխատանքի կարգավորում
92.	Վ. Վաղարշյանի 3 - 47	Պումպի աշխատանքի կարգավորում
93.	Դ. Դեմիրճյանի 29 - 33	Պումպի աշխատանքի կարգավորում
94.	Դավթաշեն վերին ՕԿՁ	Էլ. համակարգի վերանորոգում, Հոսքաչափի էլ.մալուխի վերանորոգում
95.	Ա. Տիգրանյան 42	Էլ. համակարգի վերանորոգում, էլ. համակարգի վերանորոգում
96.	Կոմիտաս 142 38	Էլ. համակարգի վերանորոգում, էլ. համակարգի վերանորոգում
97.	Սվաճյանի 20 - 43	Էլ. համակարգի վերանորոգում, պոմպի աշխատանքի զննում
98.	Գյուլբենկյան 2/1	Էլ. համակարգի վերանորոգում, էլ. համակարգի վերանորոգում
99.	Արաբկիր 19 փ. 6 - 90	Պումպի վերանորոգում, շարժիչի վերանորոգում, 2h առանցքակալ, 1h վերանորոգման հավաքածու, 1h թողարկիչ
100.	Կոմիտասի 14 - 12	Պումպի վերանորոգում, փոխվել է 2 առանցքակալ, 1 հատ ճնշումային բաքի մեմբրան 500լ, պլաստիկ դետալներ
101.	Կոմիտաս 48ա	Պումպի վերանորոգում, փոխվել է 2 առանցքակալ, 1 վերանորոգման հավաքածու
102.	Քոչար 13	Էլ. համակարգի վերանորոգում, էլ. սարքերի զննում, կարգավորում
103.	Թբիլիսյան խճ. 1,2	Պումպի աշխատանքի կարգավորում
104.	Ազատության 6 - 66	Պումպի աշխատանքի կարգավորում
105.	Շինարարների 15/1 - 130	Էլ. համակարգի վերանորոգում,
106.	Ծերենցի 7/1 - 25	Պումպի աշխատանքի կարգավորում
107.	Աթոյան անց. 18	Ջրի ճնշումների ստուգում
108.	Արտաշիսյան 40/8	Ծխնիների փոխարինում 2հատ
109.	Բեռնակիրների 85ա	Ցերեկային լույսի պլատայի փոխարինում 4հատ
110.	Նժդեհի 8	Եռաֆազ ավտոմատ անջատիչի փոխարինում 1հատ
111.	Աբովյան պուրակ ՕԿՁ	Եռաֆազ էլ. սնուցման մալուխների ստուգում
112.	Նուբարաշենի պ/կ	Ժամանակի ռելեի աշխատանքների ստուգում
113.	Խանջյան 37	Ավտոմատ անջատիչի աշխատանքների կարգավորում
114.	Աթոյան անց. 72/3	Ջրի ճնշումների ստուգում, կարգավորում
115.	Մանթաշյան 28	Ջրի ճնշումների ստուգում
116.	Նժդեհի 9	Էլ. սնուցման հաղորդալարերի կարգավորում

117.	Դիմիտրովի 76	Ջրի ճնշումների ստուգում
118.	Նոր Արեշ 5/45	Հենասյան տեղադրում, 57 * 3.0 մմ 6գծ/ մ սև մետաղ . խողովակի և ծունկ 57մմ օգտագործում
119.	Մայաթ-Նովա 4	Ջրի ճնշումների ստուգում
120.	Թադևոսյան 12/7	Պոմպակայանում ֆիլտրի մաքրում
121.	Մաշտոցի 16	d50մմ փականից ջրի արտահոսքի կանխում
122.	Սարի Թադի ՕԿՁ	Վթարված մալուխի նորոգում
123.	Մաշտոցի 16	Ջրի ֆիլտրի մաքրում
124.	Ամիրյան 15	Ավտոմատ անջատիչի աշխատանքների կարգավորում
125.	Եղբայրության 9	Էլ. մալուխի բացակա ֆազի վերականգնում
126.	Աթոյան 12/3	Ջրի ճնշումների ստուգում
127.	Շարուրի 24	Էլ. թողարկիչի աշխատանքի կարգավորում
128.	Աբովյան 66ա	Էլ. հաղորդալարերի կարգավորում
129.	Մասիսի 99/3	Ջրի ճնշումների ստուգում
130.	Բագրատունյաց 38/1	Ջրի ճնշումների ստուգում և ֆիլտրի մաքրում
131.	Արտաշիսյան 88	Էլ. անջատիչի աշխատանքի կարգավորում
132.	Ջրվեժ, Բանավան	Հոսքաչափի էլ. սնուցման ստուգում
133.	Ն. Նորքի 1-ին գ-ծ	Հոսքաչափի էլ. սնուցման ստուգում
134.	Սարի Թադի ՕԿՁ	Էլ. մալուխի վերանորոգում
135.	Էրեբունու հրապարակ	Վթարված հենասյան ապամոնտաժում, վերանորոգում և տեղադրում
136.	Ջորադբյուրի ՕԿՁ	Ջրամբարում էլ. հաղորդալարերի նորոգում
137.	Աբովյան պուրակ ՕԿՁ	Ջրամբարի էլ. փականի էլ. սնուցման ստուգում
138.	Նուբարաշենի 6/1	Ջրի ճնշումների ստուգում և կարգավորում
139.	Սարյան 25	Ջրի ճնշումների ստուգում
140.	Էրեբունու հրապարակ	Վթարված հենասյան ապամոնտաժում, նորոգում, տեղադրում, 89 մմ 2գծ/ մ սև խողովակի օգտագործում, ավտոմատ անջատիչ 32A եռաֆազ 1 հատ տեղադրում
141.	Նժդեհի 56	Ավտոմատ անջատիչի աշխատանքների կարգավորում
142.	Բեռնակիրների 85ա	Նոր կառուցված արհեստանոցում էլ. մոնտաժային աշխատանքների իրականացում, 63A ավտոմատ անջատիչ, 63A միաֆազ 3հատ, ավտոմատ անջատիչ 160A 1հատ, հաղորդալար 4 x 6մմ 110գծ/մ, լուսարձակ LED 1x100w 3հատ, LED լուսատու 100վտ 2հատ տեղադրում
143.	Շարուրի 24	Էլ. շարժիչի անսարքության կարգավորում
144.	Բագրատունյաց 12	d50մմ գնդիկավոր փականի փոխարինում
145.	Ե. Քոչարի 5, 7	Ջրի ճնշումների ստուգում
146.	Խանջյան 15	Ջրի ճնշումների ստուգում
147.	Արշակունյաց 127	Նոր կառուցված պոմպակայանի համար մոնտաժվել է 4 x 16մմ մալուխ 100գծ/մ, 3 x 6գծ/մ 57մմ խողովակ, տեղադրվել է 32A ավտոմատ անջատիչ 1 հատ, փական 1հատ, Ինվենտորային 3կվտ պոմպի տեղադրում
148.	Վ. Շենգավիթ20/1	Ջրի ճնշումների ստուգում
149.	Բեռնակիրների 85ա	Էլ. հենասյան և մալուխների ապամոնտաժում, տեղափոխում և մոնտաժում
150.	Աթոյան 18	Ջրի ճնշումների ստուգում
151.	Ն Շենգավիթ 37/3	Ջրի ճնշումների ստուգում
152.	Արշակունյաց 52/1	d=50մմ փականից արտահոսքի կանխում
153.	Գաջեգործների 74/2	Ջրի ճնշումների ստուգում
154.	Շարուրի 24	d=50մմ փականի վերանորոգում

## 1.6 Մեքենա-մեխանիզմներ

Օգոստոս ամսին իրականացվել են մեքենա-մեխանիզմների վերանորոգման աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:



Թվով 11 մեքենաների շարժիչները մասնակի նորոգվել են, փոխարինվել են շարժիչի հանդարտիչները, հղկվել և կարգավորվել են գլխիկները, փոխարինվել են կայծամուները և ներդիրները:

Կարգավորվել և վերանորոգվել են թվով 18 մեքենաների հոսանքները, փոխարինվել են կայծամուները, կայծամուխլարերը, էլ. ուղեները, վառոցքի բանալիները և

մալուխները: Նորոգվել են թվով 3 մեքենաների մեկնարկիչները, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները: Նորոգվել են թվով 5 մեքենաների արգելակման համակարգերը, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:



Նորոգվել են թվով 8 մեքենաների փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիվները, առանցքակալները, խտաբուկները, ներդիրները: Փոխարինվել են թվով 19 անվադողեր և կատարվել է դրանց հավասարակշռումը:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 5 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները,

հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Վերանորոգվել են թվով 12 մեքենաների և էքսկավատորների բարձր ճնշման խողովակները:

Կատարվել է թվով 9 մեքենաների թափքի նորոգում, ապակիների, ծածկոցի տեղադրում:



Կցորդման համակարգի նորոգումներ են իրականացվել թվով 6 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակները, շաղկապման մեխանիզմները, անջատող առանցքակալները և խտաբուկները:

Իրականացվել է թվով 2 մեքենաների խլացուցիչների նորոգում և փոխարինում, կատարվել են գողման աշխատանքներ, ռետինների, ներդիրների և խամուսների փոխարինում:

Առջևի համակարգի նորոգում կատարվել է թվով 3 մեքենաների վրա. փոխարինվել են գնդավորները, դեկի ձգաձողերը, ուղղորդիչ վռանները, մեղմիչները, անվակունդի առանցքակալները, հարվածամեղմիչի զսպակները և հարվածամեղմիչները:



Հետևի համակարգի նորոգումներ կատարվել է թվով 11 մեքենաների վրա, փոխարինվել են կարդանի խաչուկները, ատամնանիվները, առանցքակալները, կիսաստնիները, խտաբուկները, մանեկները, սատելիտները:



Փոխարինվել են թվով 2 մեքենաների դեկային մեխանիզմները, ձգաձողերը և խաչուկները, իրականացվել է դրանց կարգավորում:

Կատարվել է թվով 5 մեքենաների վառելիքի համակարգի նորոգում: Փոխարինվել են թվով 55 մեքենա-մեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղերը և զտիչները:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, ինչը նպաստում է համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները ժամանակին վերացնելուն :

## 2. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 2.1. Բաժանորդների տվյալներ

«Վեոլիա Ջուր» ՓԲ Ընկերության ուշադրության կենտրոնում է գտնվում սպառողների հետ ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման գործընթացը: Հատկապես կարևորվում է պայմանագրերում սպառողների տվյալների ճշգրիտ լրացումը:

01.09.2017թ. դրությամբ Ընկերության «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել Երևանի տարածաշրջանից 71.429, իսկ Մարզերում 78.517 նոր պայմանագիր:

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները օգոստոս ամսվա դրությամբ բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով.



h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Գոյություն ունեցող բաժանորդների ընդհանուր քանակը	Ծախսող բաժանորդների քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	333.487	260.997	78.3
2		Իրավաբանական անձ	17.049	12.274	72.0
1	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	384.085	220.058	57.3
2		Իրավաբանական անձ	16.029	8.913	55.6

### 2.2. Հասույթ

Շարունակական աշխատանքներ են տարվում խափանված ջրաչափական սարքերի հայտնաբերման և փոխարինման ուղղությամբ, որը հանդիսանում է Ընկերության հասույթի բարելավման նախապայմաններից մեկը:

Ճշտվում և բաժանորդների տվյալների բազայում լրացվում են չլրացված (թերի լրացված) տվյալները, մասնավորապես՝ «չբաշխված» տարածքներն ամրակցվում են սպասարկող աշխատակիցներին ու տեղամասերին, ինչի արդյունքում հստակեցվում է սպասարկող աշխատակիցների պարտավորությունը, բարձրանում պատասխանատվությունն ու ծախսերի վերահսկելիությունը:

Ստորև, գրաֆիկային տեսքով, բերված է 2017թ. բաժանորդների ամսական սպառման ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.



Ստորև, աղյուսակի տեսքով, բերված է 2017թ. օգոստոս ամսին Ընկերության Առևտրային տնօրինությունների հասույթի առաջադրանքների կատարողականության ցուցանիշները.

Տարածաշրջան	Ամիս	Առաջադրանք	Փաստացի	Տարբերություն
		հազ.մՅ	հազ.մՅ	%, հազ.մՅ
Երևան	Օգոստոս	7.200	7.369	2.35
Մարզեր		4.712	4.528	-3.91

Ստորև բերված աղյուսակում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական սպառման ծավալների վերաբերյալ տվյալները.

Տարեթիվ	Երևան	Մարզեր
	<i>Օգոստոս</i>	
2016թ.	15.4	10,9
2017թ.	16.3	14,0
<b>Տարբերությունը</b>	<b>0.9</b>	<b>3.1</b>

### 2.3. Գանձում

Հաշվետու ժամանակահատվածում Ընկերության ձևավորված հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածա- շրջան	Գանձում	02.2017	03.2017	04.2017	05.2017	06.2017	07.2017	08.2017	Ընդամենը
Երևան	<b>Առաջադրանք</b>	1.024.561	1.006.737	971.133	964.825	1,057,245	1,057.014	1.135.462	<b>7.216.977</b>
	Հավաքագրում	692.209	1.143.800	887.210	978.278	1,001,569	1.051.079	1.100.613	<b>6.854.758</b>
	%	67.56	113.61	91.36	101.39	94.73	99.44	96.93	<b>94.98</b>
Մարզեր	<b>Առաջադրանք</b>	582.951	608.945	594.916	560.140	657.432	659.344	650.441	<b>4.314.169</b>
	Հավաքագրում	101.954	592.521	468.175	547.640	561.150	608.411	621.344	<b>3.501.195</b>
	%	17.49	97.30	78.70	97.77	85.35	92.28	95.53	<b>81.16</b>

### 2.4 Ջրաչափեր

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ բաժանորդների տվյալների բազայում 01.09.2017թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով.

Տարածա- շրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում՝ ձախսող	%	Ընդամենը	Այդ թվում՝ ձախսող	%
Երևան	Ջրաչափով	328.029	259.378	79.07	16.395	12.264	74.80
	Առանց ջրաչափի	5.458	1.619	29.66	654	10	1.53
Մարզեր	Ջրաչափով	334.460	210.785	63.02	14.406	8.896	61.75
	Առանց ջրաչափի	49.625	9.273	18.69	1.623	17	1.05



Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում փոխարինվել է շուրջ 3.754, իսկ Մարզերում 3.366 հատ ջրաչափական սարք: «Վեոլիա Ջուր» ՓԲԸ բաժանորդների տվյալների բազայում 01.09.2017թ. դրությամբ հաշվառված պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%
Երևան	443.625	278.916	62.87	19.052	3.122	16.39
Մարզեր	392.521	81.774	20.83	16.561	1.693	10.22

Շարունակվում է պիլոտային ծրագրի շրջանակներում Ավան վարչական շրջանում առկա ջրաչափերի նորերով փոխարինման գործընթացը:

#### Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիր

Թաղամաս	Փոխարինված նոր ջրաչափերի քանակը
Նարեկացի	1363
Հ.Հովհաննիսյան	411
Դ.Վարուժան	390
Քուչակ	789
Իսահակյան	872
<b>Ընդամենը</b>	<b>3825</b>

## 2.5 Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար	Վճարում
-------------	-------	------	--------	---------

Երևան	95	98.834	16.246.501	2.902.419
Մարզեր	287	130.105	21.339.745	4.714.713




### 3.ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

#### 3.1.Ջրամատակարարման շարունակականություն

Հաշվետու ամսին Երևան քաղաքի ջրամատակարարման շարունակականության տվյալները կազմել են 97.1%, ինչը 0.1%-ով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:



Մյուս բոլոր քաղաքների և գյուղական համայնքների համար ջրամատակարարման փաստացի տևողության և հայտարարված գրաֆիկների միջև դեռևս առկա է զգալի տարբերություն:




Ջրամատակարարման շարունակականությունը (Երևան)



Աշխատանքային վիճակը որոշելու համար կատարվել են թվով 64 ճնշման կարգավորիչ փականների ստուգումներ: Պարզվել է, որ 18 ՃԿՓ-ներ անսարք են, որոնք և տեղափոխվել են համապատասխան ստորաբաժանում՝ անսարքությունները վերացնելու նպատակով:

Ստորև ներկայացված են կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ճնշման լոգերների որոշ գրաֆիկները՝ աշխատանքներից առաջ և հետո.





➤ Հաշվետու ամսվա ընթացքում իրականացվել են որոշակի աշխատանքներ ուղղված ջրակորուստների հայտնաբերմանը, որոնց ընթացքում Աբովյան քաղաքի և Օհանավան, Կարբի, Մուղնի համայնքների թվով 6 հասցեներում տեղադրվել են «Seba KMT-UDM 200» տեսակի հոսքաչափեր, ինչը հնարավորություն է տվել 5 բուսպե պարբերականությամբ չափել Աբովյան քաղաքի N1 և N2 ՕԿՁ-ների մուտքի, ինչպես նաև Օհանավան, Կարբի և Մուղնի համայնքների ջրաքանակները: Նշյալ համայնքների չաշխատող ՃԿՓ-ների կարգաբերման արդյունքում տնտեսվել է 15լ/վ ջրաքանակ:

➤ Շարունակականության և մոնիթորինգի խմբի կողմից խողովակաշարի ներքին



ուսումնասիրման տեսախցիկով «Կենտրոն» տեղամասում հետազոտվել է Չարենց և Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկում գտնվող կոյուղագծի L=15մ հատվածը: Արդյունքում պարզվել է, որ դիտահորից մոտ 14մ հեռավորության վրա առկա է ջրագծի վթար, որից արտահոսող ջուրը լցվում է ուսումնասիրված

կոյուղագծի մեջ (Q=2լ/վ): Հայտնաբերվածի մասին իրազեկվել է «Կենտրոն»



տեղամասի համապատասխան պատասխանատուներին՝ խնդիրը վերացնելու նպատակով:






### 3.2 Էլեկտրաէներգիայի կառավարում

Հաշվետու ամսվա ընթացքում պոմպակայաններում առաջացած թվով 27 էլ.մատակարման խափանումներն օպերատիվ կերպով կարգավորվել են: Ուսումնասիրվել է թվով 164 հասցե, թվով 8 պոմպակայաններում հայտնաբերված թերությունները վերացվել են: Էլ.համակարգի ուսումնասիրության արդյունքում 1 հասցեում հայտնաբերվել է նաև 4.109կՎտ հավելագրում, ինչի մասին տեղեկացվել է «ՀԷՑ» ՓԲԸ-ի համապատասխան պատասխանատուներին՝ ուղղում կատարելու նպատակով:

Կատարված աշխատանքները ստորև ներկայացված են աղյուսակային տեսքով:

h/h	Հասցե	Կատարված աշխատանք	Ամսական Կվտ/ժ
1	Ազատության 3/1	ռելեի կարգաբերում	5256
2	Թումանյան 9ա	ռելեի կարգաբերում	
3	Ֆրունզե 8/1,18	ռելեի կարգաբերում	
4	Շարուրի 26	ռելեի կարգաբերում	
5	Արաբկիր 51 անց,9	ռելեի կարգաբերում	
6	Նոր Նորք 5 29,30	ռելեի կարգաբերում	
7	Խաչատրյան 27/1	ռելեի կարգաբերում	
8	Զովունի պ/կ	հավելագրում	4109






Եղանակային շոգ պայմաններից ելնելով՝ Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում է.էներգիայի ծախսն ավելացել է ամսական 396.906կՎտ/ժ (16.37%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մեխանիկական ջրաքանակը նույնպես ավելացել է 455լ/վ-ով անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

**Երևան քաղաքի պոմպակայանների սպառած է.էներգիան**


ԿՎտ



Ընկերության ընդհանուր է.էներգիայի ծախսը ավելացել է ամսական 806.076Կվտ/ժամով (12.34%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

**«Վեոլիա Ջուր» ՓԲ Ընկերության կողմից սպառած է.էներգիան**

ԿՎտ



**3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ**

- Ջրագրկման ենթակա տարածքների բաժանորդների առանձնացում և արտածում ԱՏ համակարգից՝ բաժանորդների տվյալների բազային կցելու նպատակով:
- «Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում՝ տեղամասերի մասնագետ-տեսուչների հետ համատեղ: Հավաքագրված տեղեկատվության ներմուծում ԱՏ համակարգ և փոխանցում

Առևտրային տնօրինությանը՝ բաժանորդների տվյալների բազայի թարմացման նպատակով:

- Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի վթարների հաճախականության վերլուծական քարտեզների կազմում:
- Ավան թաղամասի ջրաչափական դիտահորերի թվով 30 հատ A4 ֆորմատի սխեմաների կազմում և տպագրում՝ Երևանի քաղաքապետարան ներկայացնելու համար:
- Թվով 25 բնակավայրերի (քաղաքներ և համայնքներ) կադաստրային քարտեզների վերափոխում « AutoCAD » ծրագրից դեպի « ArcGIS » և յուրաքանչյուր բնակավայրի համար տվյալների մշակում (ճանապարհներ, շենք-շինություններ և ջրագծեր):
- «Արևմուտք» ՏՏ համար Գյումրի քաղաքի և հարակից բնակավայրերի քարտեզների տպագրում. A0 ֆորմատով՝ 1 հատ, A3 ֆորմատով՝ 20 հատ:
- Դիլիջան, Կապան, Գորիս, Սիսիան, Վայք, Եղեգնաձոր, Ջերմուկ, Արարատ քաղաքների և հարակից համայնքների, Մասիս քաղաքի և հարակից 16 համայնքների, Ագարակ, Աշտարակ քաղաքների ներքին ցանցի քարտեզների կազմում և տպագրում:
- «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ նախկին սպասարկման տարածքների ջրագծերի տվյալների ուղղում և թարմացում:
- ՀՀ տարածքի թեմատիկ քարտեզների կազմում համաձայն Ասիական Չարգացման Բանկի ներկայացրած պահանջի, որտեղ արտացոլված են «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից սպասարկվող և չսպասարկվող բնակավայրերը:
- Տվյալների բազայի կառավարման բաժնի կողմից տրամադրված խոշոր իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների վերաբերյալ տեղեկատվության մուտքագրում ԱՏՀ քարտեզագրման բազա և համապատասխան քարտեզի կազմում:
- Իրավաբանական ու ֆիզիկական բաժանորդների վերաբերյալ տեղեկատվության մուտքագրում թարմացված բաժանորդների տվյալների բազայից ԱՏՀ տվյալների բազա:
- 1-85 հեռախոսակենտրոնի կողմից գրանցված ջրագծերի և կոյուղագծերի վթարավերականգնողական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության մուտքագրում ԱՏ համակարգ:

### 3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ



Հաշվետու ամսվա ընթացքում կարգավարների խմբի կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ.

- «Գառնի» պոմպակայանից դեպի «Խարբերդ» ՕԿՁ գնացող ջրատարի վրա հայտնաբերվել էր 50լ/վ ջրաքանակով վթար: Վթարը նկատելի էր դարձել «Արին Բերդ» ՕԿՁ-ի տարածքում տեղակայված հոսքաչափի տվյալներից, ինչպես նաև «Խարբերդ» ՕԿՁ-ի տարածքում գտնվող հոսքաչափի տվյալներից: Այդ 2 հոսքաչափերի ջրաքանակների միջև տարբերությունը սովորաբար 20լ/վ է: Իսկ վթարի ժամանակ տարբերությունը կազմել էր 70լ/վ: Վթարի մասին տեղեկացվել են «Շենգավիթ» տեղամասի համապատասխան պատասխանատուները, որոնց կողմից կատարված որոշակի աշխատանքների արդյունքում վթարը վերացվել էր :
- «Գառնի» ջրատարի վրա հայտնաբերվել էր 220լ/վ ջրաքանակով վթար, որը նկատվել էր «Արին Բերդ» խճուղում տեղադրված հոսքաչափի տվյալներից (ջրաքանակը 1060լ/վ-ից նվազել էր 840լ/վ-ի): Վթարի մասին տեղեկացվել են «Արևելք» Տարածաշրջանի տնօրինության համապատասխան աշխատակիցները: Վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում անհրաժեշտություն էր առաջացել «SCADA» հեռակառավարման ծրագրի միջոցով անջատել «Գառնի» պոմպակայանի թվով 3 պոմպ, որոնք վերամիացվել են վթարը վերացնելուց հետո:

## 4. ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

### 4.1. Համակարգչային ցանց

Օգոստոս ամսվա ընթացքում իրականացվել են մի շարք համակարգչային և ցանցային աշխատանքներ.

➤ Ադոնցի 6/1 հասցեում ավարտվել է նոր սերվերային սենյակի մոտաժային աշխատանքները, տեղադրվել է նոր կանգնակ (rack 19" 42U), նոր ցանցային սարքավորումներ (patch panel 24 port), «Cisco» երթուղիչներ, ցանցային սվիչեր, մետաղյա մալուխատար: Շենքի 8-10 հարկերում տեղադրվել է տեսահսկման համակարգ: Կատարվել են ավելի քան 300 ցանցային և հեռախոսային կետերի վարդակների (RJ-45, RJ-11) մոնտաժման աշխատանքներ, ստուգաչափումը, կապուղիների ստուգումը, կատարվել են սթրես-թեստեր: Իրականացվել են նաև ծրագրային կարգավորումներ, տվյալների հաղորդման թեստեր Աբովյան 66<sup>ա</sup> հասցեում գտնվող սերվերների միջև:

➤ Կազմակերպվել է Աբովյան 66<sup>ա</sup> և Մամիկոնյանց 48 հասցեներից համակարգչային և տպող-պատճենահանող տեխնիկայի պատշաճ անջատում, տեղափոխում դեպի Ադոնցի 6/1 հասցե: Տեղում իրականացվել են հիշյալ տեխնիկայի տեղադրման, համակարգչային ցանցին միացման և աշխատանքային վիճակի բերման աշխատանքները:

➤ «Տաշիր» տեղամասում իրականացվել են համակարգչային ցանցի մոնտաժային աշխատանքներ:

➤ Ընկերության աշխատանքների օպտիմալացման նպատակով «Շիրակ» և «Լոռի» տեղամասերում կատարվել են համակարգիչների փոփոխություն «Thin Client» սարքերով: Վերածրագրավորումից հետո «ազատ» համակարգիչները տրամադրվել են Տեխնիկական, Արևմուտք, Արևելք և ԻՀՍ տնօրինություններին:

➤ «Վայք» և «Ջերմուկ» տեղամասերում իրականացվել են համակարգչային ցանցի մոնտաժային աշխատանքներ:

Պրոֆիլակտիկ և արագ արձագանքման այցեր են իրականացվել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ սպասարկման ՀՀ տարածքում գտնվող գրեթե բոլոր հասցեներ, կատարվել է համակարգչային, տպող-պատճենահանող, ցանցային տեխնիկայի զննում և վերանորոգում, տրամադրվել է ծրագրային ապահովման աջակցություն:

## 4.2 Ինտերակտիվ համակարգ

Օգոստոս ամսին ծրագրային ապահովման խմբի կողմից մշակվել և Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովին է տրամադրվել մի շարք հաշվետվություններ մոնիտորինգ անցկացնելու համար:

Ջրաչափերի կարգաբերման և ստուգաչափման լաբորատորիայի կողմից կատարվող ստուգաչափումների և հետազոտությունների արդյունքում հայտնաբերվող խախտումները հաշվարկելու համար մշակվել է նոր ծրագրային ապահովում, որը թույլ կտա անմիջապես կատարել հաշվարկ և այդ հաշվարկները ավտոմատ կերպով մուտքագրել բաժանորդի քարտում վերահաշվարկված գումարի տեսքով: Հաշվարկը կատարվելու է ՀԾԿՀ որոշման հիման վրա:

“Փաստաթղթաշրջանառության”, “Մարդկային ռեսուրսների կառավարման” և “Գնումներ և պահեստ” համակարգերի մեջ ավելացվել է բազմալեզուների հնարավորություն:

«Ինտերակտիվ» համակարգի “Ակտեր” բաժնում ավելացվել են ծրագրային ստուգումներ, որպեսզի խախտման արձանագրությունները մուտքագրվեն միայն ճշտված եղեկակով:

## 4.3 Բջջային օպերատորներ և ինտերնետ

Հաշվետու ամսվա ընթացքում կազմակերպվել են «Ռոստելեկոմ» և «Յուքոմ» օպերատորների կապուղիների մոնտաժային աշխատանքները Ադոնցի 6/1 հասցեում: Ավարտվել են VoIP (օպերատոր՝ Ucom) տեխնոլոգիայով հեռախոսագծերի մոնտաժման և կարգավորման աշխատանքները: Տեղադրվել և ծրագրավորվել են նոր «Grandsream» համակարգեր (մինի ԱՀԿ), կատարվել են արտաքին և ներքին հեռախոսահամարների կրկնօրինակման աշխատանքներ՝ օգտագործողների տեղափոխությունն անխափան կազմակերպելու նպատակով:

## 5. ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Օգոստոս ամսին ԶԼՄ-ների հետ աշխատանքը կառուցված է եղել ջրամատակարարման խնդիրները պարզաբանելու ու դրա բարելավման ուղղությամբ համակարգում տարվող աշխատանքները ներկայացնելու վրա: Սակայն հաշվետու ամսվա թիվ մեկ թեման մատուցվող ծառայությունների սակագների ճշգրտման նոր հայտն էր:

Այդ թեմային անդրադարձել է մոտ 17 լրատվամիջոց, այդ թվում «Հանրային» ու «Շանթ» հեռուստաալիքները, «Ազատություն» ռադիոկայանը ու հետաքննությամբ զբաղվող «Հետք» լրատվական կայքը: Սակագնի հնարավոր վերանայման լուրը հետաքրքրություն ու վեճեր է առաջացրել հասարակության շրջանում: «Վեոլիա Ջուր» Ընկերությունից քանիցս պահանջել են ներկայացնել համապատասխան հիմնավորումներ, ինչպես նաև մասնակցել այդ կապակցությամբ կազմակերպվող քննարկումներին՝ ընդդիմադիրների մասնակցությամբ:



Ընկերությունը բավական զուսպ է արձագանքել դրանց, նշելով, որ ամեն ինչ արվում է օրենսդրության համաձայն եւ որ հարցը կմեկնաբանեն, երբ ՀՀ ՀԾԿՀ-ն որոշում ընդունի: Բացառություն է կազմել

«Հանրային» հեռուստաալիքին տրված հարցազրույցը, որը չեզոք կերպով է մեկնաբանել այդ լուրը:

Երկրորդ կարևոր թեմայի՝ ջրամատակարարման պարագայում Հանրային կապերի ծառայությունը գործել է երբեմն ցուցաբերելով նախաձեռնություն: Ջրամատակարարումից դժգոհության դեպքում, պարզաբանումների հիմնական լեյտմոտիվը հետևյալն է եղել. գործում դեռևս կան թերություններ ու չբավարարվող պահանջարկ, սակայն սպառողը պետք է ընդունի, որ ամիս առ ամիս ավելի ակնհայտ է դառնում առաջընթացը, ու որ ժամանակ ու ֆինանսներ են պետք նախկին օպերատորներից ստացած համակարգի թերությունները շտկելու համար:



Ցավալի բացթողում էր «Արմենիա» հեռուստաալիքի «Սուր անկյուն» ռեյտինգային հաղորդաշարի անդրադարձը խնդրին: Ճիշտ է, արտառոց դեպքեր չեն ներկայացվել, սակայն լրագրողը կոչ է արել

սպառողներին դիմել ՀՀ ՀԾԿՀ-ին, որպեսզի վերջինս իրենց բողոքների հիման վրա քննարկման առարկա դարձնի:

Մյուս դեպքերում դգոհությունը ընկերությունից մեղմելու համար օգտագործվել է ամեն մի հնարավորություն: Այսպես, Էջմիածին քաղաքից «Հանրային» հեռուստաալիքի ռեպորտաժին ի պատասխան, գլխավոր գործառնական տնօրեն Գ. Գրիգորյանի հարցադրման շնորհիվ «Վեոլիա Ջուր» Ընկերությունը հասավ նրան, որ մի քանի օր անց հեռուստաալիքը նորից անդրադարձավ խնդրին ու ներկայացրեց պարզաբանում՝ իրավիճակի օբյեկտիվ պատճառների ու ձեռնարկող քայլերի մասին:

Իսկ ջրի խնդիրներ ունեցող Գյումրի քաղաքից երկու հեռուստահաղորդում է կազմակերպվել տարվող աշխատանքների մասին: Դրանց տոնայնությունը ապացուցում է, որ, չնայած առկա դժվարություններին, տեղի



բնակիչները նկատում են դրական տեղաշարժը «Վեոլիա Ջուր» Ընկերության աշխատանքում, հասկանում են, որ առկա խնդիրները նախկին օպերատորի վատ աշխատանքի հետևանքն է: Դժգոհության ալիքն այնտեղ հստակ մեղմացել է:

Աշտարակ ու Էջմիածին քաղաքներում, ինչպես նաև Նոր Խարբերդ գյուղում նոր ջրագծերի կառուցմանն ու ջրամատակարարման բարելավմանն են անդրադարձել «ՀՀ», «Կենտրոն» ու «Yerevan Today» հեռուստաալիքները:

Երևանի մի շարք թաղամասերին ջուր մատակարարող «Գառնի –Երևան» մայրուղային ջրատարի վթարի լուսաբանման համար վթարի վայր էր հրավիրվել «Հանրային»

հեռուստատեսության թղթակիցը, ում, սպառողների դժգոհությունից խուսափելու նպատակով, վթարի պատճառների ու աշխատանքների ընթացքի վերաբերյալ պարզաբանումներ էր տվել «Արևելք» տարածաշրջանի տնօրեն Կ.Օհանյանը:

Մի շարք առանձին կարևոր ակցիաներ են իրականացվել այդ ընթացքում: Այսպես, Երևանի քաղաքապետարանի լրատվական ծառայության հետ համագործակցությամբ, Տարածաշրջանների տօրինությունների սպասարկման տարածքներում վթարված դիտահորերի վերանորոգման աշխատանքների ընթացքը լուսաբանվել է «Yerevan Today», «Արմնյուզ» հեռուստատեսությունների,

քաղաքապետարանի «Մայրաքաղաք» հեռուստածրագրի ու մի շարք լրատվական կայքերի միջոցով:

Մի շարք լրատվական կայքեր հրապարակել են «Վեոլիա Ջուր» Ընկերության՝ «Veolia Foundation-ը՝ կապուտակ Սևանին» անվանմամբ մամուլի հաղորդագրությունը

այն մասին, որ Ֆրանսիական Վեոլիա Գրուպը, «Վեոլիա հիմնադրամի» /Veolia Foundation/ միջոցով 50 հազար Եվրո է հատկացրել Սևանի մաքրությանն ուղղված ծրագրին, որն իրականացնում է «Ֆրանս-հայկական զարգացման հիմնադրամը»: Աշխատանքների ընթացքին ծանոթանալու նպատակով, Սևանում շրջայցով եղել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ գլխավոր տնօրեն Կրիստիան Լըֆեն:

«Veolia Group» ընկերության Ամառային դպրոցի դասընթացին առաջին անգամ Հայաստանից, «Վեոլիա Ջուր» Ընկերության նախաձեռնությամբ, մասնակցել են երկու ուսանող: Վերադարձից հետո նրանք կիսվել Ֆրանսիայից ստացած տպավորություններով, ինչի մասսին հանրությանը պատմել են «ՀՀ», «Կենտրոն» ու «Yerevan Today» հեռուստատեսությունները, իսկ «ՆՐԱՆՔ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ ՓԱՐԻԶԻՑ» մամուլի հաղորդագրությունը հրապարակվել է 2 օրաթերթերում և 3 լրատվական կայքերում:

Օգոստոսի կարևոր թեմաներից է «Վեոլիա Ջուր» Ընկերության կողմից սկսած համակարգված պայքարն է ապօրինի ջրօգտագործման դեմ:



Ընկերությունն այդ մասին թերթերում ու լրատվական կայքերում հրապարակել է հաղորդագրություն՝ «Ո՛չ ապօրինություններին, Այո՛ կանոնավոր ջրօգտագործմանը»



վերնագրով: «ATV» հեռուստաալիքը ու «Հանրային դիվանագիտություն» առցանց հեռուստաալիքներն ներկայացրել են Փարաքար գյուղում ջրագծերի ապամոնտաժման գործընթացը: Հարկ է նշել նաև, որ «Վեոլիա Ջուր» Ընկերության բոլոր աշխատանքներն առաջին հերթին

լուսաբանվում են ընկերության կայքում, Ֆեյսբուք ու ՅուԹուբ սոցիալական ցանցերում: